

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2008 թվականի դեկտեմբերի 12-ի

Միասնական մաքսային սակագնի դրույքաչափերից բացի՝ բացառիկ դեպքերում կիրառվող ներկրման մաքսատուրքերի դրույքաչափերի պայմանների եւ կիրառման կարգի մասին

(2012 թվականի օգոստոսի 24-ի արձանագրության խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

2008 թվականի հունվարի 25-ի «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» համաձայնագրի 4-րդ հոդվածի 6-րդ կետի իրագործման նպատակով,

առաջնորդվելով միջազգային առետրի համընդհանուր ճանաչում ունեցող նորմերով եւ կանոններով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Արձանագրությունում «Միասնական մաքսային սակագին», «ներկրման մաքսատուրքի դրույքաչափ» եւ «Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանակարգ» հասկացությունները կիրառվում են 2008 թվականի հունվարի 25-ի «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» համաձայնագրի 2-րդ հոդվածով սահմանված բովանդակության մեջ:

Հոդված 2

Միասնական մաքսային սակագինն ուժի մեջ մտնելու եւ այն ղեկավարելու համար Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով)

իրավասություններն ընձեռելու ամսաթվից, Միասնական մաքսային սակագնի դրույքաչափի (այսուհետ՝ ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափ) համեմատ, երրորդ երկրների ծագում ունեցող ապրանքի նկատմամբ՝ Կողմերից մեկը կարող է ավելի բարձր կամ ավելի ցածր ներկրման մաքսատուրքի դրույքաչափ կիրառել, բացառիկ դեպքերում՝ Հանձնաժողովի խորհրդի եզրակացության հիման վրա, որը կիրառվում է սույն Արձանագրության համաձայն:

(2012 թվականի օգոստոսի 24-ի արձանագրության խմբագրությամբ)

Մի Կողմի ավելի բարձր դրույքաչափի կիրառում այդ Կողմը կարող է առաջարկել, եթե այդպիսի միջոցն անհրաժեշտ պայման է՝ այդ Կողմ հանդիսացող պետության տնտեսության ոլորտի զարգացման համար:

Այդ Կողմը կողմերից մեկի ավելի ցածր դրույքաչափի կիրառում կարող է առաջարկել ապրանքի խիստ պակասուրդի (դեֆիցիտի) դեպքում, եթե այսպիսի միջոցն անհրաժեշտ պայման է՝ բնակչության սոցիալապես նշանակալի պահանջների բավարարման կամ այն արտադրության խթանման պահանջների համար, որը զգալիորեն կախված է երրորդ երկրներից ավանդական ներկրումից եւ չի կարող իրագործվել Մաքսային միությունում այդ կամ համանման ապրանքի արտադրության հաշվին:

Հոդված 3

1. Հանձնաժողովի՝ Կողմերից մեկի ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափ կիրառելու հարցի քննարկման համար այդ Կողմը Հանձնաժողով է ներկայացնում ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափ կիրառելու մասին առաջարկ՝ կցելով հիմնավորում՝ դրա կիրառման անհրաժեշտության վերաբերյալ:

2. Ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափ կիրառելու մասին առաջարկը պետք է ներառի հետեւյալ տեղեկությունները.

ա) ապրանքի համար սահմանվող միասնական մաքսային սակագնի դրույքաչափը,

բ) տեղեկություններ արտադրության ծավալի եւ ապրանքի նկատմամբ պահանջարկի մասին՝ ինչպես առաջարկով ներկայացող՝ Կողմ հանդիսացող պետությունում, այնպես էլ ամբողջապես մաքսային միությունում (բնաիրային եւ արժեքային արտահայտությամբ),

զ) Առաջարկով հանդես եկող Կողմ հանդիսացող պետության, ինչպես նաև ամբողջապես Մաքսային միության կողմից ապրանքի ներկրման ծավալի վերաբերյալ տեղեկություններ,

դ) ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառման ենթադրյալ ժամկետը,

ե) ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառման նպատակներին հասնելու համար մյուս Կողմերի կողմից ձեռնարկվող միջոցները:

3. Ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումը պետք է ներառի վիճակագրական տվյալներ, ֆինանսատնտեսական հաշվարկներ եւ ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառման նպատակահարմարությունը հաստատող եւ դրա կիրառման նպատակներին այլ միջոցներով հասնելու անհնարինության մասին այլ տեղեկություններ, ինչպես նաև Կողմերի պետությունների շուկաների համար դրա կիրառման հետեւանքների եւ երրորդ երկրների հնարավոր գործողությունների գնահատական:

4. Կողմերից մեկի ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափ կիրառելու մասին առաջարկը Հանձնաժողովը ուղարկում է մյուս Կողմերին:

5. Հանձնաժողովը դիտարկում է Կողմերից մեկի ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառման հարցը Հանձնաժողովի կողմից՝ ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառման մասին առաջարկի ստացման ամսաթվից 30 օրվա ընթացքում:

Հոդված 4

1. Ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափ կիրառելու մասին Կողմերից մեկի որոշումն ընդունվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից՝ հետեւյալ պայմանների առկայության դեպքում.

(փոփոխված 2012 թվականի օգոստոսի 24-ի արձանագրությամբ)

ա) ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառման հիմնավորումը,

բ) Միասնական մաքսային սակագնի համապատասխան փոփոխման վերաբերյալ մյուս Կողմերի անհամաձայնությունը:

2. Ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափ կիրառելու մասին Կողմերից մեկի որոշումն ընդունվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից՝ կոնսենսուսի հիման վրա:

(փոփոխված 2012 թվականի օգոստոսի 24-ի արձանագրությամբ)

3. Ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափ կիրառելու մասին Հանձնաժողովի խորհրդի որոշումը պետք է ներառի հետեւյալ տեղեկությունները՝

(փոփոխված 2012 թվականի օգոստոսի 24-ի արձանագրությամբ)

ա) ապրանքի անվանումը,

բ) ապրանքի կոդը՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի,

գ) Կողմի կողմից կիրառվող ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառման ժամկետը,

դ) ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափը,

ե) ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառման նպատակներին հասնելու համար մյուս Կողմերի կողմից ձեռնարկվող միջոցները:

4. Կողմերից մեկի՝ ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափ կիրառելու ժամկետը, չի կարող գերազանցել վեց ամիսը, եթե այլ բան նախատեսված չէ Հանձնաժողովի խորհրդի համապատասխան որոշմամբ:

(4-րդ կետի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի արձանագրության խմբագրությամբ)

5. Ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառման ժամկետը հաջորդ վեց ամսով երկարաձգելու մասին հարցը կարող է առաջարկվել հետաքրքրված Կողմի կողմից՝ ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ նախքան այդ ժամկետը լրանալը:

Հոդված 5

1. Հանձնաժողովը ցուցակագրում է այն ապրանքները, որոնց ներկրման դեպքում Կողմերը կիրառում են ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափեր:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ցուցակը ներառում է հետեւյալ տեղեկատվությունը՝

ա) ապրանքի անվանումը,

բ) ապրանքի կողմ՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի,

գ) ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառող Կողմը,

դ) ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափը,

ե) ավելի բարձր կամ ավելի ցածր դրույքաչափի կիրառման ժամկետը,

զ) Միասնական մաքսային սակագնի դրույքաչափը:

Հոդված 6

Սույն Արձանագրությունը գործում է ուժի մեջ մտնելու ամսաթվից հինգ տարվա ընթացքում եւ երկարաձգման ենթակա չէ:

Հոդված 7

Կողմերի միջեւ սույն Արձանագրության մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են համապատասխան Կողմերի խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, համապատասխան Կողմերից որեւէ մեկի նախաձեռնությամբ, այն փոխանցվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 8

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Արձանագրությունում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 9

Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազան ձեւավորող՝

միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2008 թվականի դեկտեմբերի 12-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է ավանդապահի մոտ, որը Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեն է՝ նախքան Հանձնաժողովի ավանդապահի գործառույթները փոխանցելը:

Ավանդապահը յուրաքանչյուր Կողմի ուղարկում է սույն Արձանագրության հաստատված պատճենը:

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից՝	Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից՝	Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)